



Գնային առաջարկ ներկայացնելու հրավեր

Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն հրավիրում է համապատասխան և իրավասու կազմակերպություններին ներկայացնելու գնային առաջարկ՝ տպագրական ծառայությունների մատուցման և տպագրված նյութերի մատակարարման համար:

Մասնակիցները պետք է՝

1. ներկայացնեն հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանք հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքերի բացակայության վերաբերյալ՝ որպես պայմանագրի ստորագրման նախապայման,
2. ներկայացնեն որակի և համապատասխանության սերտիֆիկատներ:

Սույն գնմանը մասնակցելու իրավունք չունեն անձինք.

- 1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- 2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
- 3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
- 4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, ով պահանջվող տեխնիկական և որակական հատկանիշների պարագայում ներկայացնում է ամենացածր գինը: Եթե երկու և ավելի մասնակիցներ առաջարկել են միննույն գինը, ապա Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում հավասար պայմաններ առաջարկող մասնակիցներին հրավիրել՝ առաջարկի գնի վերջնական տարբերակի բանակցման համար: Ընտրված մասնակցի հետ կկնքվի միավոր գնի շրջանակային համաձայնագիր մեկ տարի տևողությամբ: Մատակարարումը պետք է իրականացվի առանձին պատվերների հիման վրա:

Հետաքրքրվող ընկերությունները կարող են գնային առաջարկի ներկայացման ձևաթերթի վերաբերյալ տեղեկություններ ստանալ Վեոլիա Ջուր ՓԲԸ-ից աշխատանքային օրերին ժամը 09.00-13.00 և 14.00-18.00: Գնային առաջարկները պետք է ներկայացվեն ստորագրված, կնքված և փակ ծրարով կամ էլեկտրոնային եղանակով ոչ ուշ, քան 2018թ. փետրվարի 27-ը, ժամը 15:00՝ ստորև նշված հասցեում՝

ՀՀ, ք. Երևան, 0014, Ադոնցի 6/1, Վեոլիա Ջուր ՓԲԸ, 9-րդ հարկ, Գնումների վարչություն: Հեռ.՝ (374 11) 30-01-86, (438), էլ. փոստ՝ aytsemlnik.martirosyan@veolia.com: